

371.4

V-73

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ԾՐԱԳՐԵՐ

ՊԻԱԿ VIII

ԱՇԽԱՏԱՆՔ

ՊԵՏԱԿԱՆ
ԹԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԿԶՈՒԹՅՈՒՆ
1 9 8 6

371.4
5-73

MAR 2016

Յարտկան չեվ միջնակարգ դպրոցների վարչություն

371

Մ-73

Վճ

82228
1117

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

ՊՐԱԿ VIII

Ա. Շ և Ա. Տ Ա. Ն Ք

(Գյուղական դպրոցների համար)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՐԻԹԵՈՒՆ

ԵՐԿՐԱՆ

1986



10 1 JUL 2013

49 036

Պատ. խմբագիր՝ Ա. ճուղուրյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Չեկյան
Լեզվ. խմբագիր՝ Հ. Վերոսյան
Սերագրիչ՝ Ա. Արզումանյան

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՓՎՅՏԻ ՈՒ ՄԵՏԱՂԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԻԵՐԸ**

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աշխատանքային ուսուցումը վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցում, հիմք ընդունելով «գիտության հիմունքները» (Ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, կենսաբանություն և այլն), նպատակ է դնում լուծելու «տեսականում և գործնականում արտադրության ճյուղերն ուսումնասիրելու» խնդիրները:

Գյուղական դպրոցի պայմաններում այդ խնդիրն ավելի նպատակահարմար կարող է լուծվել՝ աշակերտներին գյուղատնտեսության հիմունքներին տեսականորեն ու գործնականորեն ծանոթացնելու լեղանակով:

Այդ վորոշվում է նրանով, վոր

ա) Սոցիալիստական տնտեսությունը հիմնվում է առաջավոր մեքենացած տեխնիկայի վրա (արակտոր, ավտոմոբիլ, կոմբայն և այլն) ելեկտրոններգիայի կիրարկմամբ, քիմիացման և ագրոտեխնիկայի սիստեմով և դրանով ապահովվում է «ժամանակակից ինդուստրիայի հիմունքներն ընդհանրապես» ուսումնասիրելու անհրաժեշտ բազա:

բ) Դպրոցի գյուղատնտեսական շրջապատը գյուղական դեռահասին տալիս է ավելի մոտիկ և կենսականորեն հասկանալի նյութ:

գ) Դպրոցում սովորող դեռահասները սիստեմատիկորեն մասնակցում են իրենց տարիքին մատչելի գյուղատնտեսական աշխատանքներին (դպրոցամերձ հողամասում, կալիսողում և իրենց տնտեսության մեջ):

Այս ծրագրերը վոչ լրիվ միջնակարգ դպրոցի աշակերտներին մատչելի ձևով տալիս է սիստեմատիկ ծանոթություն գյուղատնտեսության հիմունքներին:

Ծրագրի ձեռք կիրառումը կնպաստի աշակերտների գիտելիքների ամրացմանը «գիտությունների հիմունքների» ուղղու-

Հրատ. 3606. Գլուխ, լիազոր 1076. Գառվ. 167. Տիրում 1000
Հանձնված է արտադրության հունվ. 21-ին 1936 թ.
Ստորագրված է ապագրության փետրվարի 23-ին, 1936 թ.
Պետրատի տպարան, Յերևան II Գնունի 4.

խյամբ (ֆիզիկա, քիմիա, մաթեմատիկա, կենսաբանություն և այլն) և նրանց գործադրմանը սոցիալիստական շինարարության պրակտիկայում:

5-7 դասարանների ծրագրում մտցված են ճշտումներ 1933-1935 թ. թ. ընթացքում կատարած փորձնական ստուգումների և մասսայական դպրոցի փորձերի հիման վրա:

Ծրագրի հիմքում գրված և ծանոթություն բուսական և կենդանական որգանիզմի կուլտուրային: Այդ խոշոր հանրակրթական նշանակություն ունի և համապատասխանում և կենսաբանություն ծրագրի հիմնական բաժիններին: Ծանոթությունը գյուղատնտեսական մեքենաներին՝ իրականացվում և գյուղատնտեսական կուլտուրաներն ուսումնասիրելիս և վորպես ինքնուրույն բաժին ուսումնասիրվում և միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում, չերը աշակերտները ֆիզիկայից անհրաժեշտ գիտելիքներ արդեն ձեռք են բերել:

7-րդ դասարանում, բացի այն, վոր աշակերտներին ծանոթություն և տրվում կաթնատու անասունների մասին, նախատեսվում և նաև ծանոթացնել ձին խնամելու գործին: «Տրակտոր» թեման 7-րդ դասարանում անցնում են միայն այն դեպքում, յեթե աշակերտներն ավարտում են վոր լրիվ միջնակարգ դպրոցը:

Միջնակարգ դպրոցում «արակտոր» թեմայի ուսումնասիրությունը նախատեսվում և 10-րդ դասարանում: Այս դեպքում 7-րդ դասարանի ծրագիրը լրացվում և կաթնատնտեսության տարրերով:

Այս բոլորն, ինչպես և «խորհանտեսությունների, ՄՏԿ և կոլտնտեսությունների կազմակերպումը» բաժինը բարձր դասարանները փոխադրելու նպատակն և առավելագույն չափով ծրագիրը մոտեցնել աշակերտների տարիքին ու հանրակրթական պատրաստությանը:

Աշխատանքի ծրագիրը 8-10 դասարանների համար տրվում և առաջին անգամ:

Համաձայն գյուղատնտեսության առջև դրված խնդիրների աշակերտների հանրակրթական պատրաստության և գյուղատնտեսական արտադրության մեջ նրանց մասնակցելու հնարավորություններին 8-10-րդ դասարանների ծրագիրն ընդգրկում և գյուղատնտեսության արդուականիկական և տեխնիկական վերադիմավորման հիմնական հարցերը:

Գյուղատնտեսական մեքենաներին ծանոթանալու պրոցեսում, ինչպես և գյուղատնտեսական ինվենտարը պատրաստելիս, աշակերտները ձեռք են բերում փաշտամշակման և մետաղամշակման բնագավառի վերաբերյալ տարրական հմուտություններ և ունակություններ:

Փայտի և մետաղի աշխատանքների վերաբերյալ պատկերացումները և հմուտությունները զարգացվում և ամրացվում են արտադրողական խմբակների պարագծունքներում՝ ի հաշիվ հասարակական աշխատանքների ժամերի:

Ծրագիրն առանձին ուղղություն և հատկացնում աշակերտների կողմից փորձեր դնելու աշխատանքներին, վորոնք հանդիսանում են դպրոցի կողմից կատարվելիք հասարակական աշխատանքների հիմնական ձևը գյուղում, նպատում են աշակերտների հարցասիրության և հնարամտության զարգացմանը, ապահովում են դպրոցի իրական մասնակցությունը բերքի բարձրացման, նոր կուլտուրաների ընտրության և առաջ շարժման մեջ, ինչպես նաև անասնաբուծության արդյունավետությունը բարձրացնելու մեջ: Փորձնական հողակտորների հանձնարարելի չափը կրճատված և: Ընդգրկված են որչեղտները, սահմանված և փորձնական աշխատանքի՝ խնամելու, դիտելու, հաշվառում կատարելու և արդյունքները ձևավորելու ժամանակը:

Գարնանային և ամառային փորձնական աշխատանքները պլանավորված են յուրաքանչյուր դասարանում տարեկան 21 ժամվա հաշիվին, վորոնք տարվում են ի հաշիվ դպրոցի հասարակական աշխատանքների ժամերի: Գյուղատնտեսության դասատուն այս դեպքում վարձատրվում և նույն չափով, ինչ չափով վարձատրվում են տեսական պարապմունքների ղեկավարները:

Ծրագրի իրականացումը պահանջում և, մեկ կողմից, ուսումնա-դաստիարակչական նպատակներով մաքսիմալ չափով ողտադործել դպրոցական հողամասը, մյուս կողմից դպրոցական արտադրական շրջապատը (ՄՏԿ, կոլտնտեսություն, խորհանտեսություն) աշակերտների աշխատանքային ուսուցման համար հանդիսանում և ռեալ արտադրական բազա, վորն ապահովում և այս ծրագրի կենսագործումը:

Մ Ր Ա Պ Ի Ր

Հ Ի Ն Ձ Ա Ր Ե Ղ Ե Ն Ն Ե Ր Գ Ե Ս Ա Ր Ա Ն

1. ՀՈՂԸ, ՆՐԱ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ:

(10 ժամ, ներառյալ 5 ժամ լարոքատոր գործնական աշխատանքներ):

Հողի, վոպես բույսերի աճման միջավայրի գերը

Հասկացողություն հողի մասին: Հողի բաղադրիչ մասերը և նրա ֆիզիկական հատկությունները: Հողի կազմության նշանակությունն աճման գործոնները կարգավորելու նկատմամբ:

Հողի մշակումը վորպես ավելի բարենպաստ պայմաններ ստեղծելու միջոց՝ բույսերն աճեցնելու համար (խոնավության կուտակումը և պահպանումը, սննդատու նյութերի կուտակումը, մոլիբդենի և ֆլասատուների վոչնչացումը):

Հողը մշակելու լեզանակները, վարելը, ցաքանելը, կուլտիվացիան:

Հասկացողություն կուլտուրական վարի մասին և նրա նշանակությունը: Մշակման գործիքները, աշխատանքի պրոցեսը, հողի շերտը կտրելը և շուռ տալը, մանրացնելը, հարթելը: Գործիքների աշխատող մասերը, ազրոտեխնիկական պահանջները գործիքների աշխատելու նկատմամբ:

Հողի պարարացումը: Պարարտացման նշանակությունը՝ բերքաավելությունը բարձրացնելու համար: Պարարտացման տեսակները: Որդանական և հանքային, ուղղակի և վոչ ուղղակի: Պարարտացման ազդեցությունը հողի և բույսի վրա (գոմաղբ, սուրճ): Կրի՝ վորպես վոչ ուղղակի կերպով գործող պարարտանյութի դերը:

Տեսական պարապմունքների պլանում անհրաժեշտ և նախատեսել հետևյալ լաբորատոր-գործնական աշխատանքները:

1. Հողի ֆիզիկական հատկությունները վորոշելը (սարուկ-

տուրան, խոնավության տարողությունը, ջրաթափանցությունը):
2) ծանոթություն պարարտանյութերին. վերջիններս արտաքին տեսքով վորոշելը: 3) մշակող գործիքների կառուցվելիք ուսումնասիրություն (եքսկուրսիա):

2. ԲԱՆՁԱՐԵՂԵՆՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՃԵՑՆԵԼԸ

Բանջարաբուծության նշանակությունը: Առանձին բանջարեղենների հարաբերությունը ջերմությանը, լույսին, խոնավությանը, ուղին: Մննդարար նյութերի պահանջը: Ծածկված գետինը և նրա նշանակությունը: Ծածկված գետնի պայմաններում աճման գործոնները դեկավարելու հնարավորությունը:

Ջերմոցների նշանակությունը. ընդհանուր հասկացողություն: Տաք և ցուրտ ջերմոցներ. նրանց նշանակությունը: Գոմաղբը. գոմաղբ պատրաստելը: Ջերմոցային հող, նրա պատրաստելը: Ջերմոց հիմնելը: Բանջարեղեն ցանելը և աճեցնելը: Ջերմության, խոնավության և լույսի կանոնավորումը: Պայքար ֆլասատուների դեմ: Մածիլանոց կառուցելը և սածիլներ աճեցնելը:

Բանջարեղեններ մշակելը (կաղամբի, տոմատի և արմատապտուղների որինակով): Հողի և պարարտանյութի պահանջը. ցանելը և տնկելը, խնամքը, պայքար մոլիբդենի և ֆլասատուների դեմ, բերքահավաք: Բերքի գլխավոր տեսակները:

Սերմավիտությունը բանջարանոցի հողամասում և առանձին բանջարեղենների տեղը սերմավիտության ժամանակ: Բանջարանոցային միամյա բույսերի սերմեր ստանալու պայմանները:

Տեսական պարապմունքների պլանում պեղք և նախատեսել հետևյալ լաբորատոր-գործնական աշխատանքները:

1. Ճանաչել բանջարեղենների սերմերն ըստ արտաքին տեսքի:
2. Վորոշել սերմերի ծլունակությունը (աճեցնելու սկզբնական աշխատանքները):
3. Ուսումնասիրել ցանելու և տնկելու մեքենաները (եքսկուրսիա):
4. Ճանաչել բանջարեղենների գլխավոր ֆլասատուները (2—3) կոլեկցիաներում:
5. Ճանաչել բանջարեղենների ծիլերը: Հասարակական արտադրական աշխատանք: Հասարակական

արտադրական աշխատանքների պլանով անհրաժեշտ և անցկացնել հետևյալ գործնական վարժությունները:

1. Ուշ ջերմոց կամ սածիլանոց հիմնելը: 2. Սածիլի սերմեր ցանելը: 3. Նախասածիլումը: 4. Սածիլներ հանելը: 5. Խնամք, նոսրացում, քաղհան և փխրացում. ջրելը:

3. ՊՏՈՒՂՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻ ԿՈՒՂՏՈՒՐԱՆԵՐ ԱՃԵՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պտղաբուծության նշանակությունը: Շուտ համոզ հատապտուղների (առանձնապես մորի) բուծելու նշանակությունը:

Բազմացնելու լեզանակները: Վեգետատիվ բազմացման լեզանակները տնկաշվեր, անդալիսներ, արմատաշվեր, պատվաստներ: Պատվաստելու միջոցով բազմացող պտուղներ և հատապտուղներ:

Պատվաստը վորպես պտուղների կուլտուրաների բազմացման հիմնական լեզանակ: Պտղալին տնկարան, նրա կազմակերպումը և հիմնական աշխատանքներն այնտեղ. տունկեր աճեցնելը, պատվաստելը, պատվաստների և միամյա տունկերի խնամքը, ընդհանուր ծանոթություն:

Պտղատու ծառերն այգի փոխադրելը — հողը պատրաստելը, տնկելը, պտղատու ծառերի խնամքն այգում. ճյուղքերի ձևավորումը: Հողը խնամելը, պայքար ֆլասատունների դեմ: Հատապտղալին բույսերը խնամելու տոանձնահատկությունները:

Նոր տեսակներ ստանալը: Միջուրինի աշխատանքների նշանակությունը նոր տեսակի պտուղներ և հատապտուղներ ստանալու ուղղությունը: Հասկացողությունն նոր տեսակներ ստանալու միջոցների մասին: Արհեստական խաչասերումը վորպես նոր տեսակի բույսեր ստանալու ավելի լավ միջոց:

Տեսական պարապմունքների պլանում անհրաժեշտ և անցկացնել հետևյալ լաբորատոր-գործնական աշխատանքները. 1) հաղարջի ճյուղքեր կտրելը, տնկելու համար պատրաստելը. 2. պատվաստելու աշխատանքներ:

Հասարակական արտադրական աշխատանքների պլանում պետք և անցկացնել հետևյալ գործնական վարժությունները. 1) տնկարանի հիմք գնելը. 3) հաղարջի, մորի, արմատ տնկելը և խնամելը. 3) տնկարանը խնամելը. 4) այգին խնամելը — չորուկներ կտրելը, ծառե-

րի բներին կրաշուր քսելը, սրսկելը, բնի փոս տեղերը ցանելը. 5). տնկիների պատվաստումը (ամառը):

4. ԲՆԱՓԱՅՏ ՅԵՎ ՄԵՏԱՂ, ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՅԵՎ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՎԵՆՏԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Փայտի և մետաղի աշխատանքների համար խմբակ կազմակերպելը. լենթախմբակների բաժանելը, ըստ աշխատանքալին տեղերի դասավորելը, պարտականությունների բաշխումը. վարքի հիմնական կանոններն արհեստանոցում: Աշխատանքալին տեղ. կարգն աշխատանքալին տեղում և նրա պահպանումը փշաշալուց:

Ինվենտար պատրաստելու համար գործադրվող նյութերը՝ փափուկ պողպատ («լերկաթ») ձողաձև, շերտաձև, թերթաձև:

Բնափայտ, տախտակ, տաշած տախտակ: Դրանց գործադրման լեզանակը:

Բնափայտ սղոցելը և ունդելը. գործիքները նիշնշելը, ոպերացիաներ կատարելու տեխնիկան, ճշտությունն ստուգելը (բացատրել, ցույց տալ, փորձնական աշխատանք տալ):

Մետաղը հատելը և խարտոցելը. գործիքները, նիշնշելը, ոպերացիան կատարելու տեխնիկան, ճշտությունն ստուգելը (բացատրել, ցույց տալ):

Փայտը և մետաղը ծակելը. ծակելու գործիքները գործադրելու հիմնական լեզանակները. ծակելու համար նիշնշելը և կետելը:

Բարակ մետաղը ծակհարով ծակելը (բացատրել, ցույց տալ):

Իր պատրաստելը (սղոցելու, ունդելու, հատելու և խարտոցելու ոպերացիաները գործադրելով). բահի, փոցխի, բրնձի կոթեր, սածիլների, ծաղիկների արկղ, պատգարակ և այլն: Բահի, բրնձի կտրող մասերը խարտոցով սրելը:

Հասարակական աշխատանքներին հատկացված ժամերի հաշվին աշակերտներին ծանոթացնում են լրացուցիչ կերպով դասելու աշխատանքներին և իրեր են պատրաստել տալիս — հիմնական ոպերացիաները համեմատաբար բարդացնելով. սալի վրա հատելը և մամլակում, խարտոցելը ու ձևավոր լեզրագծերով բարձրացնելով ճշտության պահանջը: Բանվածքներ, մարդեր՝ բանջարեղեն տնկելու համար, այգու սանդուխք կլոր աստիճաններով և այլն:

**5. ԱՄԱՌԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏ-
ՐԱՍՏՎԵԼԸ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՊԼԱՆ ԿԱԶՄԵԼԸ**

Ամառային աշխատանքների պլան կազմելը:

Փորձնական աշխատանքների բովանդակությունը:

Աշխատանքի որյեկցներ. Տոմատ, կաղամբ, կարտոֆիլ, ճակն-
դեղ, մորի, հաղարջ, ծաղիկներ:

Աշխատանքի ծավալը. Յուրաքանչյուր աշակերտ պարտավոր
է աճեցնել 12 տոմատ, կամ 12 թուփ կարտոֆիլ, 150—200 գա-
ղար կամ ճակնդեղ և 2 թուփ (մորի կամ հաղարջ):

Յուրաքանչյուր կուլտուրայի վերաբերյալ դրված փորձի
պայմանները սահմանում է դպրոցը: Թեմատիկայի և փորձի լե-
թակա կուլտուրայի համեմատ կազմում են հաշվառման ձևեր և
տարվում են դիտողություններ ու հաշվառումներ:

Գյուղատնտեսական կուլտուրաներ աճեցնելու փորձնական
աշխատանքը հանդիսանում է գյուղատնտեսության կարևորա-
գույն բաժինը և հասարակական արտադրական աշխատանքի
հիմնական ձևը, վորը և պարտադիր է բոլոր աշակերտների հա-
մար:

Փորձեր դնելը, խնամքը, դիտողություններն ու հաշվառումն
անց են կացվում ի հաշիվ հասարակական արտադրական աշխա-
տանքի ժամանակի բյուջեի:

Փորձնական աշխատանքները ղեկավարում է գուղատնտեսու-
թյան դասատուն և վարձատրվում է նույն հիմունքներով, ինչ
հիմունքներով վարձատրվում են տեսական առարկաները:

6. ԱՆՑԱԾԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Վեցերորդ դասարան

1. ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Վողջ դասարանի աշխատանքների արդյունքների ամփո-
փումը: Պատրաստվել ցուցահանդեսին:

2. ԴԱՇՏԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐ ԱՃԵՑՆԵԼԸ

Ա. Օգնականացանի կուլտուրաներ աճեցնելը

Աշնանացանի կուլտուրաներ մշակելը (ցորեն): Դաշտն աշ-
նանացանի համար պատրաստելը: Մաքուր և դրազեցրած ցելեր:

Մշակումը, ժամկետները, խորութունը: Մշակող դործիքներ:
Գութանը տեղակայելու կանոնները: Պարարտանյութը դաշտ փո-
խադրելը:

Սերմը պատրաստելը: Ցանելու նյութերի նկատմամբ առա-
ջադրվող պահանջները. մաքրություն, ծլունակություն, քաշը և
խոշորությունը, վարակված չլինելը: Սերմի մաքրության նշա-
նակությունը բերքավորությունը բարձրացնելու տեսակետից:
Շրջանի համար պլանով հաստատված տեսակները:

Տեսակավորումը վորպես ցանելու նյութերը բարելավելու
միջոց: Ախտահանումը վորպես միջոց վարակման դեմ:

Սերմագտիչ մեքենաներ (քամհար, տեսակավորող, տրիչեր),
նրանց աշխատելու սկզբունքները: Տեսակավորող մեքենայի աշ-
խատող հիմնական մասերն ըստ սերմերի քաշի և չերկարություն:
Գյուղատնտեսական բույսեր ցանելը և տնկելը: Ցանքսը
վորակով, ժամանակին կատարելու նշանակությունը բերքատը-
վությունը բարձրացնելու տեսակետից: Ցանելու լեղանակները,
շարքացան, շաղացան:

Աշնանացանի կուլտուրաները, ցանելու ժամանակը և ժամ-
կետները:

Սերմացվի նորմաները և հատիկը հողի մեջ ինչ խորու-
թյամբ ցանելը: Շարքացան մեքենաներ, աշխատանքի պրոցեսը,
բանող մասերը, ցանող ապարատ, խոփեր: Ցանող ապարատն
ըստ տրված նորմայի տեղակայելու հաշիվը:

Աշնանացանի կուլտուրաների խնամքը: Չլան դերը: Պաշար
սառցային կեղևի դեմ: Ցաքանելը: Պաշար մոլախոտերի դեմ:
Հասունանալը, հավաքելու ժամանակը և պրոցեսը: Պաշար
կորուստների դեմ: Ընդհանուր հասկացողություն հնձող մեքե-
նայի մասին կտրող ապարատի կազմությունը, փոցխող ապարա-
տի աշխատանքն ու նշանակությունը: Ընդհանուր հասկացողու-
թյուն խրձկապ ապարատի մասին: Կոմբայնի աշխատանքի
պրոցեսը:

Տեսական պարամունքների պլանում անհրաժեշտ է անց-
կացնել հետևյալ լաբորատոր-գործնական աշխատանքները.

1. Սերմերի բացարձակ քաշը և մաքրությունը սահմանելը:
Աճելու ուժը պարզելը: Տնտեսական պլանիությունը հաշվումը
(սերմերի ծլունակությունը վորոշվում է նախորդը): 2. Սերմա-
զտիչ մեքենաների կազմությունն ուսումնասիրելը (տեսակավո-
րող տրիումֆ և տրիչեր). բանեցնելու համար տեղակայելը, կար-

գալորելը: 3. Շարքացան մեքենայի գործնական ուսումնասիր-
րությունը: Յանող ապարատի տեղեկացումը՝ տրված նորման
ցանկում համար:

Յորենի հիմնական կոլեկցիան ցանկը և զխտողության
կազմակերպումը գարնանային և ամառային ամիսներին:

Մանրաբայրուհի.— Լաբորատոր, գործնական աշխատանքներն
ապահովելու նպատակով անհրաժեշտ և վաղորոք արկղներում
ցանկը զանազան տեսակի սերմեր— ծիլեր ստանալու համար:

Բ. Գարնանացանի կուլտուրաներ անցնելը

Բամբակ անցնելը (վոչ բամբակացան շրջաններում՝ ցորեն
կամ գարի): Հողը գարնանացանի կուլտուրաների համար պատ-
րաստելը: Վաղ ցելի նշանակութիւնը: Սերմացուն պատրաստելը,
տեսաչափորումը, ախտահանումը: Բամբակը ցանելու ժամանակ-
ը և ժամկետները:

Գարնանացանի հացահատիկները ցանելու ժամանակը և
ժամկետները: Խողովի աչիները բաց անելու, կտրելու ժամանակը
և ժամկետները: Գարնանային աշխատանքների ժամկետների
խտացումը վորպես բերքի բարձրացման միջոց: Գերվաղ ցանքը
և նրա նշանակութիւնը: Խնամքը, պաշար մոլախոտերի, վնաս-
ատուների ու հիվանդութիւնների դեմ: Հացահատիկների հա-
վաքը:

Արմատապտուղները մշակելու առանձնահատկութիւնները-
նողը պատրաստելու և պարարտացնելու աշխատանքները: Արմա-
տապտուղները ցանելու և տնկելու ժամանակը: Արմատապտուղ-
ները հավաքելու ժամանակը: Բամբակը քաղհանելու և ջրելու
ժամկետները, բամբակի հավաքը:

Թիթենիները բաղձացնելը և մշակելը: Թիթենու տերևները
վորպես շերամի սնունդ:

Տեսական պարապմունքների պլանում անհրաժեշտ և անց-
կացնել հետևյալ լաբորատոր աշխատանքները.

Ծանոթութիւն գարնանացանի հացահատիկների և բամբակի
սերմերի լավ տեսակներին:

Ծանոթանալ շարքացանի աշխատանքներին:

Ցանկ և տնկել բամբակի, կարտոֆիլի, ցորենի կոլեկցիա-
ներ-կոլեկցիոն հողամասում:

Գ. Խոտ անցնելը

Բաղձամյա խոտերի մշակումը — առվուլտ (չոնջա): Խոտերի
տեղը ցանքաշրջանառութիւն ժամանակ, ցանելու պայմանները:
Ցանած խոտերի խնամքը, խոտհնձի ժամանակը: Խոտհնձի մեքե-
նայացումը: Խոտհար մեքենա, նրա կազմութիւնը և աշխատան-
քը: Խոտհար մեքենայի կտրող մասի համեմատութիւնը հնձիչ
մեքենայի կտրող ապարատի հետ: Խոտհար մեքենայի աշխա-
տանքը կարգավորելը: Խոտը չորացնելը: Մարգագետինները
խնամելը ընդհանուր ծանոթութիւն:

Տեսական պարապմունքների պլանում անհրաժեշտ և անց-
կացնել հետևյալ լաբորատոր աշխատանքները. 1. Գործնական ծա-
նոթութիւն խոտհար մեքենայի կառուցվածքին: Կտրող ապա-
րատի կցումը և անջատումը: Կոթածողի լերկարութիւն և ամառ-
ների ճիշտ դասավորութիւն ստուգումը: Ծանոթութիւն խոտե-
րի տեսակներին: Կազմել կոլեկցիա և հերբարիում:

Միամյա և բաղձամյա խոտերի կոլեկցիաներ կազմելը:

Դ. Հասկացողութիւն ցանքաշրջանառութիւն մասին

Հասկացողութիւն ցանքաշրջանառութիւն մասին՝ շրջանի
տիպիկ ցանքաշրջանառութիւն որինակի վրա:

Կուլտուրաների հերթափոխութիւն նշանակութիւնը մոլա-
խոտերի և հիվանդութիւնների դեմ պաշար մղելու և հողի
սննդարար նյութերի պաշարն ավելի լրիվ չափով ուստադործելու
ասպարեղում: Առանձին կուլտուրաների դերը ցանքաշրջանա-
ռութիւն ժամանակ. լավագույն նախորդները: Ցանքաշրջանա-
ռութիւն կախումը պլանային առաջադրութիւնից: Ցանքաշրջա-
նառութիւն դերը կոլտնտեսութիւնների կազմակերպչական-տըն-
տեսական կալուստայան գործում (պլանային առաջադրութիւն
կատարման ապահովումը, բերքատվութիւն բարձրացումը, աշ-
խատանքի արտադրողականութիւն բարձրացումը, արտադրա-
կան միջոցների լավագույն ուստադործումը):

Տեղական կոլտնտեսութիւնների ցանքաշրջանառութիւն
տիպական սխեմաները: Ցանքաշրջանառութիւն քննարկում:

Աշխատանքի կազմակերպումը դաշտավարական գործում.
բրիգադը վորպես արտադրական հիմնական ընկի: Բրիգադը կազ-
մակերպելու սկզբունքը կազմը, հողամասը, քաշող ուժը, մեքե-
նաներն ու գործիքներն ամրացնելը: Կոլտնտեսականների աշ-
խատանքների վարձատրումն աշխտերով:

Հասարակական-արագրական աշխատանքի «Դառնային կուլտուրաներ անցնելը» բեմադրի գծով

Հասարակական—արտադրական աշխատանքների պլանում պետք է անցկացնել հետևյալ գործնական վարժությունները: 1) գույքը դաշտում բանի գցելը և աշխատելը. 2) վորպես ոգնական՝ քամհարի մոտ աշխատելը. 3) ցանելու վորակն ստուգելը. 4) հանքային պարարտանյութերը խառնելը և ներդնելը. 5) բամբակի սերմեր գտելը. 6) բամբակի սերմերի ծլունակությունը վորոշելը 7) կարտոֆիլ տնկելը. 8) սածիլները ջերմոցից հողը փոխադրելը:

3. ԲՆԱՓԱՅՏԸ ՅԵՎ ՄԵՏԱՂԸ, ՆՐԱՆՑ ԿԻՐԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ:

Ծառերի տեսակները և բնափայտի հատկությունները — սոճի յեղևնի, կեչի, կաղնի, արփաքին տեսքից նրանց ճանաչելը: Դիմացկունությունը, կարծրությունը, ճղելիությունը:

Մետաղների տեսակները և նրանց հատկությունները. չուպաև, կարծր և փափուկ պողպատ: Կարծրությունը, առաձգականությունը մածուցիկությունը:

Դեղանքների միացումը կես փայտով: Ուլերացիաներ կատարելու տեխնիկան: Արփաքին և ներքին ակոսներ հանելը: Ուլերացիաները կատարելու տեխնիկան (բացատրել, ցույց տալ, փորձնական աշխատանք տալ):

Կես փայտ միացնելու յեղանակով պատրաստել իրեր և ակոս հանել, անցած ուլերացիաները կատարել. սանդուխք, զանազան կանգնակներ (сто́йка), հեղույսներ գյուղատնտեսական ինվենտարի համար, սղոցների չափրասում՝ փոփոխական մատով, գերանդին ամրացնելու ող:

Դպրոցի հասարակական աշխատանքներին հատկացված ժամանակի բյուջեի հաշվին աշակերտները լրացուցիչ կերպով ծանոթանում են փայտը փորելու, փայտը քառանիստ բլթակով միացնելու, մետաղը մկրատով կարելու և թեթև զողիչով զողելու յեղանակին և պատրաստում են հետևյալ իրերը—նտարաններ, բանկաներ, զավաթներ, վերանորոգում են դուլեր, թեշտեր, ջրցիլներ և այլն:

4. ԱՄԱՌԱՅԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ճախապատասխանը, գարնանային — ամառային ժամանակաշրջանի հասարակական—արագրական աշխատանքի պլան կազմելը

Ամառային աշխատանքի պլան կազմելը՝ դաշտային կուլտուրաների վերաբերյալ փորձեր կատարելու, արմատապտուղներ աճեցնելու և կոլեկցիոն ցանքեր կազմակերպելու գծով:

Հասարակական արատադրական աշխատանքի բովանդակությունը, աշխատանքի որակն: 1) հացահատիկներ, արմատապտուղներ, կերի խոտեր և տեխնիկական կուլտուրաներ՝ բամբակ և այլն. 2) կոլեկցիոն ցանքեր՝ ցելերի և շրջանի պլանային ցանքաշրջանառություն կոլեկցիաներ, բամբակի և հացահատիկների պլանային տեսակների, արմատապտուղների, յուղատու կուլտուրաների և խոտի կոլեկցիաներ, նոր կուլտուրաների կոլեկցիաներ. 3) բանջարեղեններ ցանելը—ճակնդեղ, դադար, պամիգոր, կաղամբ:

Աշակերտների ողակն անց է կացնում մեկ փորձ 100 — 150մ² հողամասի վրա: Յուրաքանչյուր աշակերտ

ա) աշխատանքն սկսում և դիտում է կոլեկցիոն ցանքի հողամասից 5 մ-ի վրա. բ) 5 սերմ է աճեցնում:

Փորձնական աշխատանքի բովանդակությունը

Տեսակների ստուգումը, ցանելու և տնկելու զանազան ձևերը. պարզի վաղ ցելի և գարնանը ցանք անելու, պարարտանյութերը հողի հետ խառնելու աղբեցությունը (քանակը և ժամկետը) բերքի վրա. խորը վարելու աղբեցությունը բերքի վրա:

Փորձերը դրվում են ինչպես դպրոցական հողամասում, նույնպես և կոլտնտեսություն հողամասերում: Փորձերի պայմանները և փորձեր դնելու պլանը սահմանվում են փորձակայանների առաջադրությունների համաձայն՝ հարմարեցնելով տեղական պայմաններին:

Կոլտնտեսություն հողամասի վրա դրվելիք փորձերը հաստատվում են դպրոցի և կոլտնտեսություն վարչություն կողմից. փորձերի համար հատկացված հողամասի առանձին կտորների մշակումը տրվում է կոլտնտեսություն ուժերով:

Փորձերի վերաբերյալ գարնանային աշխատանքներ: Հողամասի բաժանումը, հողակտորների դասավորումը, պաշտպանող շերտեր հողակտորներն աշակերտներին ամրացնելը, փորձեր դնելը:

Ամառային յեվ աշնանային աշխատանքներ. Խնամք ըստ թե-
մատիկայի և կուրորուրայի, դիտողություն:

Մոլախոտեր հավաքելը, հերքարիում կազմելը: Հողակտոր-
ների հետազոտությունը. պաշտպանող շերտերի և փորձնական
հողակտորների բերքահավաքը:

Սերմերը զատելը և մաքրելը: Փորձի հաշվառումը, ձևավո-
րումը:

Փորձեր դնելը. խնամքը, դիտողությունը և հաշվառումը,
նաև սերմեր և կոլեկցիոն ցանքսեր աճեցնելը հանդիսանում են
«գյուղատնտեսություն» բաժնի պարտադիր մասը և տարվում
են հասարակական աշխատանքի ժամանակի բյուջեյի հաշվին:

5. ԱՆՑԱԾԻ ՏՄՐԵԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Յոթերորդ գլուխը

1. ԱՄԱՌՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆՔԸ.

Ամառվա փորձերի արդյունքների մշակումը: Դասարանի
աշխատանքների ամփոփումը: Եքսպոնատների սարումը (մտն-
տած): Մասնակցություն ցուցահանդեսին:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՊԱՆԵԼԸ

Անասնաբուժության խնդիրները յերկրորդ հնգամյակում:
Անասնաբուժության արդյունավետությունը բարձրացնելու ուղի-
ները: Յեղային անասունների նշանակությունը, մետիլացիա
(ազնվացեղում), կերի բազա, խնամքը և կանոնավոր պահելը:
Կուլանտեսական և խորհանտեսական ապրանքային ֆերմա-
ները և նրանց դերը անասնաբուժության բարձրացման գործում:
Կուլանտեսականների անհատական ոժանդակ անասնաբուժու-
թյան զարգացումը:

Անասունները կանոնավոր պահելու հիմունքները: Զոոգի-
դիկենայի դերն անասնաբուժությունը զարգացնելու գործում:
Պահելու և խնամելու ազդեցությունն անասունների արդյու-
նավետության և առողջության վրա: Մսուրային ձևով պահելու
գիդիկենան:

Անասնաբաղի հիմնական մասերը. բաժանմունք կաթնա-
տու անասունների համար, արտադրողների, մատղաշի և կերի
բաժանմունք: Պահանջներ անասնաբաղի նկատմամբ, հատակի,

նալի, կերակրամանների կառուցվածքը: Ողափոխություն:

Կենդանիների խնամքը. նրանց մաքրելը: Խողանակի և
քերոցի նշանակությունը: Փոոց, հերթափոխություն: Վերջա-
վորությունների խնամքը, սմբակները կտրելը, յեղջյուրները
մաքրելը: Մտինքների (կրծի) խնամքը:

Մսուրային ձևով պահելիս, հիվանդությունների դեմ նա-
խազգուշական միջոցների անհրաժեշտությունը, անասնաբուժա-
կան հսկողության անհրաժեշտությունը:

Աշխատանքների պլանում անհրաժեշտ և մուցնել եքսկուրսիա
դեպի անասնաբաղը - նրա կառուցվածքին զործնականորեն ծա-
նոթանալու համար:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴՍՆԻՆԵՐԸ ԿԵՐԱԿՐԵԼԸ ՅԵՎ
ՄԱՏՂԱՇԸ ԽՆԱՄԵԼԸ

Կերերի տեսակները. բուսական, կենդանական և հանքա-
յին: Բուսական կերերի տեսակները - կոպիտ, հյութալի, համա-
կենտրոնացրած: Առանձին տեսակի կերերի ազդեցությունը
մսաբերության և կաթնատվության վրա: Կերերի գործնական
արժեքավորումը կերի միավորներով:

Կաթնատու անասունների կերաբաժին սահմանելը: Կենդա-
նիների կենդանի քաշը և արդյունավետությունը վորոշելը, պա-
հելը, պարարտության և հղիության պայմանների հաշվառումը:
Կերաբաժին (կերի միավորներով) և յեղած կերերից ուսցիոն կազ-
մելը, կերը պատրաստելը, կերակրելը:

Բուժումը և ազնվացեղության նշանակությունը: Խոշոր
յեղջյուրավոր անասունների հիմնական պլանային ցեղերը:

Մատղաշն աճեցնելը: Հորթերը կերակրելու կարգը, կաթով
կերակրելուց մյուս կերերին անցնելը:

Հորթերի գոմը, խնամելը կազմակերպելը: Խոզերը կերա-
կրելու և խնամելու առանձնահատկությունները: Տեսական պա-
րապմունքների պլանում պեղք և նախատեսել ինտելյալ լաբորա-
տոր գործնական աշխատանքներ. 1) Խոտի, գարու, կորնգանի,
քուսպի կերային ոգտավետության արժեքավորումը: 2) Անա-
սունների կենդանի քաշը վորոշելը - չափելով: 3) Կաթնատու
անասունի կերի ուսցիոնը վորոշելը: 4) Կերը պատրաստելու
մեքենաներին և ապարատուրային ծանոթանալը:

88562
39588
7104



4. ԱՇԽԱՏՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԽՆԱՄԵԼՈՒ ՅԵՎ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յեզները խնամելը, կերակրելը և պահելը: Յեզները կերակրելու, ջրելու և մաքրելու պայմանները: Յեզների աշխատանքները գյուղատնտեսության մեջ: Յեզները լծելու կանոնավոր յեղանակը, լծի և սամիների ընտրությունը: Նույնը ձիերի նկատմամբ:

Հասարակական արագրական աշխատանք

Հասարակական արտադրական աշխատանքների պլանում անհրաժեշտ է նախատեսել հետևյալը.

1. Կովերին նորմաներով փորձնական—ցուցադրական կերտալը, դրսևորելով կերակրելու ազդեցությունն անասունի արդյունավետության վրա:

Կերակրումը շարունակվում է հետևյալ ժամանակաշրջանները—նախապատրաստական, անցման և յեղրափակման, հատկապես փորձնական: Յուրաքանչյուր կովին կցվում է 6 աշակերտ կերակրելու համար: Կերակրման արդյունքները մշակվում է ամփոփվում են: Կերակրելու համար անհրաժեշտ է համապատասխան համաձայնություն սահմանել կոլտնտեսության վաչուկյան հետ անասուններ առանձնացնել, կեր հատկացնել: Փորձի յենթակա կենդանիների խնամքը և կերը տանում են անասուններին սպասարկող կոլտնտեսականները:

5. ԿԱԹԻ ՅԵՎ ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇՆԱԿՈՒՄԸ

1. Կաթի առաջացումը: Կթելու կանոնները և կուրծի խնամքը: Կաթի վորակը վորոշելը: Հասկացողություն կաթի արատների մասին: 2. Կաթը խնամելու յեղանակը—քամելը, ստեղծելը պաստյորացնելը: 3. Կաթի վերամշակումը, սերգատելը: Յուղ հարելը և նրա հետագա մշակումը (ընդհանուր հասկացողություն). մածուն պատրաստելը, թան, բակտերիաների նշանակությունը:

Տեսական պարապմունքների պլանում անհրաժեշտ է նախատեսել հետևյալ լաբորատոր—գործնական աշխատանքներ. 1) կաթի տեսակարար կշռի, կեղտոտություն և թթվածություն (ըստ Տերնների) վորոշումը. 2) յուղի տոկոսը վորոշելն ըստ

Հերբերի. 3. սերգատի գործնական ուսումնասիրությունը. թրմբուկը քանդելը և պտուտակը կարգավորելը: Աշխատանք սերգատով:

Վոչ լրիվ միջնակարգ դպրոցում «Կարի յեվ կարնամբերեների վերամտեսումը» բեմայի փոխաբեմ մտակվում է «Տրակտոր, նրա կազմուրյունը յեվ աշխատանք» բեման:

Տրակտոր, նրա կազմուրյունը յեվ աշխատանք

Տրակտորի շարժիչը, ներքին ալրման շարժիչի գործադրությունն արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ: Տրակտորի նշանակությունը:

Տրակտորի գլխավոր մասերը և նրանց նշանակությունը. մոտոր՝ փոխանցման մաս, լրացուցիչ մեխանիզմներ:

Մոտորի հիմնական մասերը. գլան, մխոցային խումբ, կոթածոց, կարտեր, ծնկաձև հոլան, թափանիվ: Մոտորի աշխատանքի պրոցեսը, մոտորի տակտերը, մխոցի շարժումը:

Գազի բաշխումը. ներծծող և դուրս մղող կափարիչի նշանակությունը: Բաշխիչ հոլան, բուռնցքների և բռթիչի նշանակությունը: Ուժի փոխանցումը ծնկաձև հոլանից բաշխիչ հոլանին:

Շարժիչի սնումը—վառելիք. բենզինի և նավթի հատկությունները: Կարբյուրատոր, նրա նշանակությունը և կազմությունը (ընդհանուր ծանոթություն): Նորմալ խառնուրդ: Հասկացողություն հարուստ և աղքատ խառնուրդների մասին: Շարժիչի պտույտների քանակի, սեղուկատորի և ողամաքիչի նշանակությունը:

Վառելիք. Մագնետոյի, լարերի և բռնկող մոմի նշանակությունը: Բռնկվող խառնուրդի բռնկման մոմենտը գլանում. կազմակերպությունը:

Շարժիչի սառեցումը. Սառեցնելու անհրաժեշտությունը: Ռադիատորի, վենտիլյատորի կառուցվածքը: Ջրային շապկի նշանակությունը:

Շարժիչը յուղելը. ձնշման տակ ցայելով յուղելու յեղանակը: Տրակտորի փոխանցման մեխանիզմը: Շղթայացման կցորդելը, արագություն արկղը, յետևի փոխանցումը և դիֆերենցիալը. Ընդհանուր հասկացողություն նրանց նշանակության, կազմություն և գործողության մասին:

Տրակտորի շարժվելու կառուցվածքը: Անիվավոր և թրթուռային տրակտորներ: Անկախարելու լծակները և տրակտորը գեղով վարելը:

Տրակտորի մասերի փոխազդեցությունը: Շղթայակցված մեքենային ուժը փոխանցելու յեղանակները—շղթայակցվող կեռ, շարժահարող ճախրանիվ, փոխանցման գլան: Տրակտորի ուժը կեռի և ճախրանիվի վրա:

Տրակտորի յուսավորության ցանցը. (Մշակվում է, յեթե տրակտորն ելեկտրատարքավորում ունի): Տրակտորի ելեկտրական լուսավորություն շղթան, հոսանքի գեներատորը: Լուսավորություն ցանցի լարերը, անցկացումը դեպի լամպաները: Հոսանքը միացնելը և անջատելը:

Եֆեկուրսիա դեպի տրակտոր. Եքսկուրսիայի ժամանակ լինում են հետևյալ ցուցադրումները.

1. Տրակտորը պատրաստել աշխատանքի պահելու համար, պատրաստել վառելիքը, ազդիատորը շուրջ ցնելը, յուղելը:

2. Շարժիչը բանի պցելը, կարբյուրատորը կանոնավորելը՝ վառելը: Հետևել շարժիչի աշխատելու ընդոյթին, յուղելուն ու սառեցնելուն:

3. Լաբորատորական վարժություններ տրակտորի վերաբերյալ. գազը և վառելի ղեկավարելը փոքր և մեծ քանակի պտույտների ժամանակ: 1, 2, 3, արագությունների և յետ շարժման վարժություններ:

Դուրս գալ տրակտորով դաշտ. առանց շղթայակցման՝ տեղից շարժելը, ուղիղ գնալը, դարձումներ կատարելը (փիղիկապես զարգացած աշակերտների համար):

6. ԲՆԱՓԱՅՑ ՅԵՎ ՄԵՏԱՂ, ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ

(Գարեհացիկ-ամառային գյուղատնտեսական աշխատանքների ինվենսարը նախապատրաստելը)

Բնափայտի ամենատարածված արատները, վուսդոտություն, կապտավուն գույն ստանալը, փթելը, մանրաթելերի անկանոն դասավորությունը:

Հասկացողություն գործիքային պողպատի մասին, ամխածնային և հատուկ պողպատի մասին:

Փայտի մշակումը կացնով, կտրելը, տաշելը սրելը: Դարբնո-

ցային հասարակ ոպերացիաներ. ծալել, ձգել, ծակել: Ոպերացիաները կատարելու տեխնիկան:

Անցած բոլոր ոպերացիաների գործադրությունը՝ գյուղատնտեսական ինվենտարը վերանորոգելիս և նախապատրաստելիս: Բանվածքներ, կեռեր, փոցիսի մասերը, գյուղատնտեսական մեքենաների, սայլերի մասերը, բահի կոթեր, այլ գործիքներ:

Հասարակական աշխատանքների հաշվին աշակերտությունը լրացուցիչ կերպով ծանոթանում է փայտի շրջանակային միացմանը և կատարում է հետևյալ աշխատանքները—Չերմոցների շրջանակներ, քամհարի մողերի շրջանակներ, անասնաբաղի համար մանր սարքավորում, նույնը հանրակացարանների, կարմիր անկյունների համար:

Ի հաշիվ նույն ժամանակի անց է կացվում Եքսկուրսիա դեպի վերանորոգման արհեստանոց կամ գործարան՝ փայտի և մետաղի մեքենայական մշակմանը ծանոթանալու համար:

7. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Ուրբերոզ գասարան

1. ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հողը վորպես միջնորդ բույսի ու պարարտանյութի միջև և վորպես գյուղատնտեսություն արտադրության միջոց: Հողի կազմությունը, հիմնական բաղադրիչ մասերը:

Ջրի, ողի, սննդի և ջերմության ուժի մը հողի նկատմամբ Բիոլոգիական գործողությունները: Հողի կլանելու ընդունակությունը, դրա նշանակությունը բույսի սննդաուության գործում: Հողային լուծույթ. հողային լուծույթի ռեակցիայի ազդեցությունը բույսի զարգացման վրա: Բույսի սննդաուության տարրերը և բույսերի առանձին խմբակների պահանջը սննդանյութերի նկատմամբ:

Հողի պարարտացումը վորպես բերքատվությունը բարձրացնելու միջոց:

Պարարտանյութերի տեսակները: Որդանական պարարտանյութեր. գոմաղը, տորֆ, կոմպոստ, կանաչ պարարտացում. սրանց ազդեցությունը հողի և բույսերի վրա: Սննդանյութերի տոկոսային բաղադրությունը: Գոմաղը, տորֆ և կոմպոստ պատ-

բաստելու յեղանակը, հողի հետ խառնելը: Ազդեցութիւնը գա-
նազան կուլտուրաների վրա: Կանաչ պարարտացման մշակելը,
գործադրման պայմանները, ոգտագործումը:

Հանքային պարարտանյութեր: ԽՍՀՄ-ի արդյունաբերու-
թյամբ մշակվող հանքային հասարակ պարարտանյութերի հիմնա-
կան ներկայացուցիչները, նրանց բաղադրութիւնը, բնութա-
գրութիւնը, գործադրութիւնը: Համակցված հանքային պարարտա-
նյութեր, Պ. Ք. Կ-ի բաղադրութիւնը $\frac{1}{10}$ -ը, այդ կապակցութեամբ
ոգտագործման նորմաները:

Մոխիրը, պահելու յեղանակը, գործադրութիւնը: Կրային
հողեր: Հացահատիկային, թեխնիկական, բանջարանոցային բույ-
սերի և կերի խոտերի պահանջը սննդանյութերի նկատմամբ:

Պարարտանյութերը ցրելու նորմաները և ժամանակը: Հաս-
կացողութիւն պարարտացման սխառեմի մասին:

Գործնական կերպով վորոշել հողի համար պահանջվող պա-
րարտանյութերը— գաշտային փորձի մեթոդիկան՝ պարարտա-
նյութերի ազդեցութիւնը բերքատվութիւն վրա վորոշելու հա-
մար:

Տեսական պարապմունքների պլանում անհրաժեշտ է նա-
խատեսել հետևյալ յարութիւնները գործնական աշխատանքներում: 1. Հողի
կլանողական ընդունակութիւնը և ջրառոյակին ուժիմը: 2. Հողի
թթվութիւնը վորոշելը. կիր ավելացնելու անհրաժեշտութիւնը
վորոշելը: 3. ավազուտային կուլտուրաների նկատմամբ վեղե-
տացիոն փորձեր դնելը: 4. ցանքաշրջանառութիւն սխառեմում
պարարտանյութեր մտցնելու պլան կազմելը:

2. Հողը ՄՇԱԿԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՅԵՎ ՅԱՆՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Ա. Հիմնական հասկացողութիւններ գյուղատնտեսական մեքե-
նաշինարարութիւն և ցուրների, մեքենաների յեւ մեխանիզմների
մասին

Հասկացողութիւն սե և գունավոր մետաղների մասին.
ձուլվող և վերամշակվող չուգուն, աւիւսային և հատուկ պող
պատ: Գունավոր մետաղների խառնածույլեր, լատուն, բրոնզ,
բարիտ: Չողումներ:

հասկացողութիւն մեքենաների մասին: Մեքենայի յերեք
հիմնական մասերը: Հասկացողութիւն մեքենա-գործիքի և մե-
քենա-շարժիչի մասին: Գյուղատնտեսական մեքենաների կառուց

վածքի առանձնահատկութիւններն՝ աշխատանքի պայմանների
կապակցութեամբ: Գյուղատնտեսական մեքենաների կլասիֆի-
կացիան ըստ արտադրական պրոցեսների:

